ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"05" ...սեպտեմբերի..... 2022թ. N ԵՀԵ/134/14434-2022

«Երեք բռունցք» ՍՊ ընկերության տնօրեն Հ. Հարությունյանին
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 7շ., 2բն.
ՀՎՀՀ 01230857
Հեռ. 098-40-21-48

Հարգելի՛ պարոն Հարությունյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊ ընկերության միջև 30.12.2021 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/ՅՍ-2» ծածկագրով կամուրջների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.16 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով «Երեք բռունցք» ՍՊ ընկերությանը ներայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Երեք բռունցք» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշյալ փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 7.16 կետի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հրաժարվում է կնքված Պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ միակողմանի լուծված:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

4/5/2022

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. Երիցյան

Կատարող՝ Արփինե Կարապետյան
Գնումների համակարգման բաժին
Հեռ.010.511-329